

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 33/2

16 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց քաղաքացի Խորեն Նիկոլյանի բողոքը ՀՀ ՖՆ ՕՀ և ՆԱԳՎ ՕՀՎ 21.10.2014 թ-ի թիվ 1411827 վարչական ակտի դեմ:

Քաղաքացի Խորեն Նիկոլյանի բողոքում բերված փաստարկները.

Խորեն Գագիկի Նիկոլյանը հայտնում է, որ իր տան բակում ունի ավտոտնակ, որը շահագործվել է անձնական օգտագործման համար: Աշխատանք չունենալու պատճառով 2014 թ-ին ամառային ամիսներին (2 ամիս) փորձնական ավտոմեքենաների պոլիէթիլային թաղանթներ փակցնելու աշխատանքային գործունեություն է ծավալել: Քանի որ դա փորձնական էր, գործունեությունը ծավալել է առանց փաստաթղթերի առկայության և համապատասխան գրանցման:

Ըստ բողոքաբերի, 25.07.14 թ-ին, որքան հիշում է, ապակիները մզեցնելու համար իրեն զանգահարել է Հրազդանի Ոստիկանության բաժնի աշխատակիցը և պահանջել մզեցնել ոստիկանության բաժնի <Վիլիս> ավտոմեքենայի ապակիները: Քանի որ այդ պահին զբաղված է եղել իր հայրիկի վիրահատության հարցերով, պատասխանել է, որ մեքենան կարող են բերել 2 օր հետո:

07.08.2014 թ-ին Ոստիկանության Հրազդանի բաժնի համայնքային ոստիկանության բաժանմունքի աշխատակիցներն այցելել են Խորեն Նիկոլյանի տուն և հրավիրել Ոստիկանության Հրազդանի բաժին, որտեղ նա տվել է բացատրություն՝ ավտոտնակում աշխատանքային գործունեություն ծավալելու վերաբերյալ: Ոստիկանության Հրազդանի բաժնի համայնքային ոստիկանության բաժանմունքի տեսուչ, ոստիկանության լեյտենանտ Ա.Ասատրյանի կողմից կազմվել է բացատրություն վերցնելու մասին արձանագրություն: Նույն օրը հարուցվել է վարչական վարույթ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի և 30-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով, համաձայն որի որոշվել է Խորեն Նիկոլյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ գումարով 2.304.000 դրամ, իբրև շուրջ 2 տարի ապօրինի գործունեություն ծավալելու համար:

Վարույթի իրականացման համար անհրաժեշտ լսումներ է նշանակվել 13.10.2014 թ-ին: Արձանագրությունը ստանալուց հրաժարվելու պատճառով Խորեն Նիկոլյանը այն ստացել է փոստային ծանուցմամբ՝ 26.09.14 թ-ին:

ՀՀ ՖՆ ՕՀ և ՆԱ ԳՎ ՕՀՎ 20-րդ բաժնի պետի կողմից կազմված թիվ 1411827 արձանագրությունում նշված է, որ Խորեն Գագիկի Նիկոլյանն իր տան բակում առկա ավտոտնակում շուրջ երկու տարի զբաղվել է ավտոմեքենաների ապակիների վրա պոլիէթիլային թաղանթների տեղադրման /փակցնելու/ գործունեությամբ, առանց օրենքով սահմանված կարգով պետական գրանցում /հաշվառում/ կամ հարկային մարմնում հաշվառում ունենալու:

Խորեն Նիկոլյանը նշում է, որ ընդամենը 2 ամիս է զբաղվել նշված գործունեությամբ: Արձանագրությունում մեջբերված 2 տարի ապօրինի գործունեություն իրականացնելու մասին տվյալներն իրականությանը չեն համապատասխանում: Օպերատիվ հետախուզության վարչության կողմից պատասխանատվության ենթարկելու միակ հիմքը հանդիսացել է Խորեն Նիկոլյանի կողմից գրված բացատրությունը, որը գրվել է ոստիկանության մարմնի ճնշման ազդեցության ներքո, և քանի որ 1-ին անգամն է գտնվել ոստիկանությունում սխալմամբ 2 ամսվա փոխարեն գրել է 2 տարի:

Այն, որ Խորեն Նիկոլյանը չէի կարող 2 տարի նման գործունեություն ծավալել հաստատվում է նաև անձնագրի մեջ առկա կնիքներով: Հետևաբար 2 տարի ապօրինի

գործնեություն իրականացնելու մասին արձանագրությունը չի համապատասխանում իրականությանը, որի հետևանքով սխալ է հաշվարկվել համախառն եկամտի, ինչպես նաև դրանից բխող տուգանքի չափը:

Ըստ բողոքի, նշված գործունեությամբ զբաղվելու համար անհրաժեշտ են կլիմայական տաք պայմաններ: Քանի որ բողոքաբերի ավտոտնակը հարմարեցված չէ նման գործունեության համար, հետևաբար չէր կարող անգամ մեծագույն ցանկության դեպքում գարնանային, աշնանային կամ ձմեռային ամիսներին զբաղվել նման գործունեությամբ:

Խորեն Նիկոլյանը 06.10.2014 թ-ին բողոք է ներկայացրել ՀՀ ՖՆ օպերատիվ հետախուզության և ներքին անվտանգության գլխավոր վարչության պետին վերահաշվարկ կատարելու, թիվ 1411827 արձանագրությունը վերացնելու և հարուցված վարչական վարույթը կարճելու վերաբերյալ: Սակայն 24.10.14 թ-ին ստացվել է թիվ 1411827 վարչական ակտը: Ընդ որում, լսումներից հետո հիմնավորված է համարվել ոչ թե 2 տարի, այլ 18 ամիսների ընթացքում գործունեություն ծավալելու փաստը և որպես ապօրինի ձեռնարկատիրական գործունեությունից շրջանառություն նշվել է 1728000 դրամ, հանելով ՌԴ-ում գտնվելու ժամանակահատվածը: Ստացվում է, որ Հրազդանի Ոստիկանության բաժնում բողոքաբերը տվել է բացատրություն, որի մի մասը համապատասխանում է իրականությանը, իսկ մյուս մասը՝ ոչ: Մինչդեռ, բացատրությունում նշված ոչ մի հանգամանք իրականությանը չի համապատասխանում: Բացի այդ, եթե նույնիսկ այդ բացատրությունն է հիմք հանդիսացել վարչական վարույթ հարուցելու համար, ապա դրանում նշվել է, որ գործունեությունը մշտական բնույթ չի կրել, ինչը կրկին հաշվի չի առնվել վարչական ակտ կազմելիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի դրույթներով Խորեն Նիկոլյանը խնդրում է անվավեր ճանաչել հարկային մարմնի կողմից 21.10.2014 թ-ին կազմված թիվ 1411827 վարչական ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ոստիկանության Հրազդանի բաժնի համայնքային ոստիկանության բաժանմունքում Խորեն Նիկոլյանից վերցվել է բացատրություն, որի վերաբերյալ 07.08.2014 թ-ին կազմվել է արձանագրություն (այսուհետ՝ Արձանագրություն):

Արձանագրությունում Խորեն Նիկոլյանը մասնավորապես նշել է, որ աշխատանք չունենալու պատճառով իր տան բակում գտնվող ավտոտնակում շուրջ երկու տարի զբաղվել է ավտոմեքենաների ապակիների վրա պոլիէթիլենային թաղանթ փակցնելու գործունեությամբ: Մեկ մեքենայի թաղանթապատման արժեքը կազմել է 15.000-17.000 դրամ, որից շուրջ 8000-9000 դրամը ծախսվել է ապրանք ձեռքբերելու համար: Յուրաքանչյուր սպասարկված մեքենայից Խորեն Նիկոլյանի զուտ եկամուտը կազմել է 6000-7000 դրամ:

Ըստ Արձանագրության, Խորեն Նիկոլյանն ամսական սպասարկել է թվով 5-7 հաճախորդի և քանի որ իր կողմից իրականացված գործունեությունը կրել է փորձնական բնույթ, գործունեությունն իրականացվել է առանց փաստաթղթերի առկայության: Նշված գործունեությամբ Խորեն Նիկոլյանը զբաղվել է միայնակ: Արդյունքում, հիմք ընդունելով «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները, ՀՀ Ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնի պետի 15.08.2014 թ-ի թիվ 63/35 գրությունը և Արձանագրությունը, 22.09.2014 թ-ին կազմվել է թիվ 1411827 արձանագրությունը, համաձայն որի Խորեն Նիկոլյանի ապօրինի գործունեության ժամանակահատվածի համախառն եկամուտը կազմել է 2.304.000 դրամ: Տվյալ դեպքում Խորեն Նիկոլյանի ապօրինի գործունեության արդյունքում ձևավորված համախառն եկամտի

չափը հաշվարկվել է հիմք ընդունելով Արձանագրությունում արտացոլված տվյալների միջինացված ցուցանիշները (6 մեքենա x 16.000 դրամ x 24 ամիս):

22.09.2014 թ-ին կազմված թիվ 1411827 արձանագրությունը ստանալուց հետո Խորեն Նիկոլյանի կողմից ներկայացվել է դիմում-բողոք, որով բերված ապացույցների ուսումնասիրության արդյունքում վերահաշվարկվել է ապօրինի գործունեության արդյունքում ձևավորված համախառն եկամտի չափը, որը կազմել է 1.728.000 դրամ: Տվյալ դեպքում հաշվի է առնվել այն հանգամանքը, որ Խորեն Նիկոլյանը վերը նշված երկու տարվա ընթացքում շուրջ վեց ամիս բացակայել է Հայաստանի Հանրապետությունից: Արդյունքում, ՀՀ ՖՆ ՕԿ և ՆԱԳՎ ՕԿՎ 21.10.2014 թ-ի թիվ 1411827 վարչական ակտով կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված տուգանքը՝ գումարով 864.000 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն. «Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է»:

Քննարկվող դեպքում Խորեն Նիկոլյանն ինքնուրույն, իր ռիսկով իրականացրել է ավտոմեքենաների ապակիների թաղանթապատման գործունեություն, որի հիմնական նպատակը, ըստ էության, հանդիսացել է շահույթ ստանալը: Հաշվի առնելով նշված հանգամանքը, ինչպես նաև այն, որ հիշատակված գործունեությամբ Խորեն Նիկոլյանը զբաղվել է ապօրինի, այն է՝ առանց պետական գրանցման, առանց հարկային մարմիններում հաշվառման կանգնելու, սահմանված կարգով իրականացված վարչարարության արդյունքում ՀՀ ՖՆ ՕԿ վարչության 20-րդ բաժնի պետի կողմից 21.10.2014 թ-ին ընդունվել է թիվ 1411827 վարչական ակտը, որով Խորեն Նիկոլյանի նկատմամբ կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսվածով նախատեսված պատասխանատվության միջոցը:

Ինչ վերաբերվում է բողոքում բերված այն պնդումներին, որ իրականացված գործունեությունը կրել է փորձնական բնույն, ապա դրանք հիմնավոր չեն, քանի որ Խորեն Նիկոլյանը վերոգրյալ գործունեությամբ է զբաղվել ոչ թե մի քանի օր, կամ մի քանի շաբաթ, այլ՝ մեկ տարուց ավելի ժամանակահատվածում, ինչը փորձնական բնույն չի կարող համարվել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ ՕԿ և ՆԱԳՎ ՕԿՎ 21.10.2014 թ-ի թիվ 1411827 վարչական ակտը թողնել անփոփոխ, իսկ բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

